ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի 2016 թվականի **թիվ 2** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման եւ գործառման մասին» հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 92-րդ հոդվածի 9-րդ կետի եւ «Արդյունաբերական համագործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 27 հավելված) 2-րդ կետի իրականացման նպատակներով՝ Եվրասիական միջկառավարական խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել «Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման եւ գործառման մասին» հիմնադրույթը՝ կցվում է:

2. Սահմանել, որ եվրասիական տեխնոլոգիական հարթակներ ձեւավորելիս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդն առաջնորդվում է ցանկով սահմանված ուղղություններով՝ համաձայն հավելվածի:

3. Եվրասիական տնտեսական հաձնաժողովի խորհրդին՝ մինչեւ 2016 թվականի հուլիսի 1-ն ընդունել որոշում՝ սույն Որոշմամբ նախատեսված ցանկի շրջանակներում գերակա եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման մասին:

4. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ մինչեւ 2016 թվականի հուլիսի 1-ը դիտարկել եվրասիական տեխնոլոգիական հարթակները պետական գիտատեխնիկական զարգացման ծրագրերում ներառելու հնարավորությունը:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետութունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական միջկառավարական
խորհրդի 2016 թվականի ապրիլի 13-ի
թիվ 2 որոշմամբ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման եւ գործառման մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն հիմնադրույթը մշակվել է՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 92-րդ հոդվածին եւ Եվրասիական միջկառավարական խորհրդի 2015 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 9 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղություններին համապատասխան. դրանով սահմանվում է եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործառման նպատակն ու խնդիրները, որպես Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների նորարարական ենթակառուցվածքի օբյեկտներ (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ)՝ դրանց ձեւավորման, գործառման, ֆինանսավորման կարգը:

2. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների շնորհիվ ապահովվում է համակարգային աշխատանք՝ ուղղված գիտատեխնիկական զարգացման գործում առաջատար ազգային եւ համաշխարհային ձեռքբերումների կուտակմանը, անդամ պետությունների գիտական ներուժի մոբիլիզացմանը՝ նորարարական պրոդուկտների եւ տեխնոլոգիաների մշակման, դրանք արդյունաբերական արտադրության մեջ ներդնելու մասով կիրառական խնդիրների համատեղ լուծման համար:

3. Սույն հիմնադրույթի նպատակներով կիրառվում են հետեւյալ հասկացությունները՝

եվրասիական տեխնոլոգիական հարթակներ՝ նորարարական ենթակառուցվածքի օբյեկտներ, որոնք հնարավորություն են տալիս ապահովելու արդյունավետ հաղորդակցություն եւ բոլոր շահագրգիռ կողմերի (գործարարության, գիտության, պետության, հասարակական կազմակերպությունների) մասնակցության հիման վրա ստեղծելու հեռանկարային առեւտրային տեխնոլոգիաներ, բարձր տեխնոլոգիական, նորարարական եւ մրցունակ արտադրանք.

համատեղ նախագիծ՝ եվրասիական տեխնոլոգիական հարթակների շրջանակներում անդամ պետությունների կազմակերպությունների կողմից համատեղ իրագործվող, համագործակցային կապերի զարգացմանն ուղղված նորարարական նախագիծ.

անդամ պետության լիազորված մարմին՝ պետական իշխանության մարմին կամ կազմակերպություն, որն անդամ պետության կողմից լիազորված է իր տարածքում եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործունեության համակարգում իրականացնելու համար:

II. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործառման նպատակը եւ խնդիրները

4. Գիտատեխնիկական եւ նորարարական ոլորտներում համագործակցությունն ապահովող եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործառման նպատակն է անդամ պետությունների ներուժերի միավորման հիման վրա բարձրացնել բոլոր շահագրգիռ կողմերի (գործարարության, գիտության, պետության, հասարակական կազմակերպությունների) փոխգործակցության արդյունավետությունը՝ ազգային արդյունաբերական համալիրների փոխշահավետ նորարարական զարգացումը խթանելու, անդամ պետություններում

կոմպետենտության կենտրոններ ստեղծելու, ապագայի տնտեսություն ձեւավորելու, շարունակական տեխնոլոգիական նորացման, արդյունաբերության ոլորտում գլոբալ մրցունակությունը բարձրացնելու նպատակով:

5. Սույն հիմնադրույթի 4-րդ կետում նշված նպատակին հասնելու համար եվրասիական տեխնոլոգիական հարթակների մասնակիցները կատարում են հետեւյալ խնդիրները՝

ա) անդամ պետությունների տնտեսության իրական հատվածի համար նոր տեխնոլոգիաների անհրաժեշտությունը որոշելը.

բ) գերակա գիտատեխնիկական նախագծեր որոնելը եւ դրանց օժանդակելը.

գ) անդամ պետությունների համագործակցությունը կարգավորելը եւ համատեղ նախաձեռնություններին եւ համատեղ նախագծերին աջակցելը.

դ) անդամ պետությունների գիտատեխնիկական զարգացմանը խոչընդոտող արգելքներ բացահայտելը եւ դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ մշակելը.

ե) գիտատեխնիկական եւ նորարարական ոլորտներում անդամ պետությունների համագործակցության հարցերի վերաբերյալ փաստաթղթերի կատարելագործմանը օժանդակելը.

զ) անդամ պետությունների գիտատեխնիկական զարգացման ձեռքբերումները, ինչպես նաեւ եվրասիական տեխնոլոգիական հարթակների շրջանակներում ունեցած ձեռքբերումները մասսայականացնելը.

է) անդամ պետությունների գիտատեխնիկական եւ նորարարական համագործակցության արդյունքները դիտանցելը:

III. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործունեության ուղղությունները

6. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների մասնակիցները, իրենց խնդիրներին համապատասխան, անցկացնում են աշխատանք՝ գործունեության հետեւյալ հիմնական ուղղություններով (իրավասության շրջանակներում)՝

ա) անդամ պետությունների գիտատեխնիկական զարգացման ձեռքբերումների, ինչպես նաեւ եվրասիական տեխնոլոգիական հարթակների շրջանակներում ունեցած ձեռքբերումների մասսայականացման մասով խնդիրները լուծելու նպատակով՝

կատարում են անդամ պետությունների գիտատեխնիկական զարգացման առաջատար ձեռքբերումների վերլուծություն,

կատարում են գիտատեխնիկական եւ նորարարական ոլորտներում համաշխարհային պրակտիկայի վերլուծություն,

ձեւավորում են (անհրաժեշտության դեպքում) առաջատար տեխնոլոգիաների եւ արտադրանքի միասնական ռեեստրներ,

ձեւավորում են տեղեկատվական եւ հաղորդակցական համակարգեր եւ պորտալներ, որոնցով ապահովվում են տեղեկատվական բազաների մատչելիությունը եւ անդամ պետությունների բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հաղորդակցությունը՝ առաջատար տեխնոլոգիաների ու արտադրանքի զարգացման եւ յուրացման մասով,

իրականացնում են առաջատար ազգային եւ համաշխարհային ձեռքբերումների վերաբերյալ գիտելիքների տարածում եւ մասսայականացում, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցներում հրապարակումների միջոցով, կողմնակի միջոցառումներին մասնակցելու եւ սեփական միջոցառումները կազմակերպելու միջոցով, առաջատար տեխնոլոգիաների յուրացման եւ ժամանակակից կադրերի պատրաստման հարցում խորհրդատվական օժանդակություն իրականացնելու միջոցով.

բ) անդամ պետությունների տնտեսության իրական հատվածի համար նոր տեխնոլոգիաների անհրաժեշտությունը որոշելու մասով խնդիրը լուծելու համար՝

անցկացնում են անդամ պետությունների տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների տեխնոլոգիաների եւ արտադրանքի զարգացման մակարդակի գնահատում, դրանց համադրումը օտարերկրյա անալոգների հետ,

ձեւավորում են նոր տեխնոլոգիաների եւ արտադրատեսակների անհրաժեշտության վերաբերյալ միասնական ռեեստրներ՝ անդամ պետությունների տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների հայտերի եւ առաջարկների հիման վրա,

մշակում են անդամ պետությունների տնտեսության այն ճյուղերում եւ հատվածներում շուկաների եւ տեխնոլոգիաների զարգացման կանխատեսումներ, որոնցում իրենց գործունեությունն են իրականացնում եվրասիական տեխնոլոգիական հարթակները, այդ թվում՝ նորարարական արտադրանքի հիմնական տեսակների պահանջարկի կանխատեսումներ,

մշակում են անդամ պետությունների տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների առաջատար տեխնոլոգիաները յուրացնելու եւ արտադրանքն արտադրելու վերաբերյալ առաջարկներ, որոնք պարունակում են տարբեր տեխնոլոգիական այլընտրանքների մշակում,

օժանդակում են անդամ պետությունների տարածքներում առաջատար տեխնոլոգիաների առաջխաղացմանն ուղղված գիտական, նախագծային, արտադրական եւ այլ միավորումների կազմակերպմանը.

գ) գերակա գիտատեխնիկական նախագծեր որոնելու եւ դրանց զարգացմանն օժանդակելու մասով խնդիրը լուծելու համար կարող են անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով անդամ պետությունների արդյունաբերության զարգացման ճյուղային ծրագրերում առաջարկներ ներկայացնել.

դ) անդամ պետությունների համագործակցությունը կարգավորելու եւ համատեղ նախաձեռնություններին եւ համատեղ ծրագրերին աջակցելու խնդիրը լուծելու համար՝

մասնակցում են անդամ պետությունների համագործակցության գիտատեխնիկական եւ նորարարական ոլորտներում գերակա ուղղությունների իրագործմանը՝ համատեղ նախաձեռնություններ եւ համատեղ նախագծեր պարունակող նախագծային առաջարկների փաթեթ ձեւավորելու միջոցով,

աջակցում են մասնակիցներին իրականացնելու համատեղ նախագծեր՝ ուղղված՝

համատեղ լաբորատորիաների, գիտահետազոտական կենտրոնների եւ կայանների ստեղծմանը,

նորարարական արտադրանքի եւ տեխնոլոգիաների համատեղ ստեղծմանը եւ ներդրմանը,

ժամանակակակից տեխնոլոգիաների տեղայնացմանը,

անդամ պետությունների միջեւ ժամանակակից տեխնոլոգիաների փոխանակմանը,

ճյուղի նորարարական զարգացման եւ փոխադարձ շահ ներկայացնող համատեղ նախագծերի իրականացման համար պայմանների ձեւավորմանը,

իրականացնում են համատեղ նախագծերի իրականացման համար լավագույն գործընկերների որոնում,

անցկացնում են խորհրդատվական աշխատանքներ՝ նորարարական ոլորտում համագործակցային գործընկերությունների ձեւավորման եւ համատեղ նախագծերի իրականացման ժամանակ,

կազմակերպում են (անհրաժեշտության դեպքում) համատեղ նախագծերի համատեղ փորձաքննության անցկացում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան,

անցկացնում են բյուջետային եւ արտաբյուջետային ֆինանսավորման աղբյուրներից միջոցների ներգրավման աշխատանքներ՝ համատեղ նախագծերի իրականացման համար,

իրականացնում են այլ աշխատանք՝ ուղղված համատեղ նախագծերի ուղեկցմանը դրանց իրագործման բոլոր փուլերում՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխան.

ե) անդամ պետությունների գիտատեխնիկական զարգացմանը խոչընդոտող արգելքների հայտնաբերման խնդիրը լուծելու եւ դրանց վերացման վերաբերյալ առաջարկություններ մշակելու համար՝

մշակում են առաջարկներ գիտատեխնիկական եւ նորարարական ոլորտների զարգացման վերաբերյալ,

իրականացնում են խորհրդատվական եւ փորձագիտական աշխատանքներ.

զ) անդամ պետությունների գիտատեխնիկական եւ նորարարական համագործակցության արդյունքների դիտանցման խնդիրը լուծելու համար՝

անցկացնում են դիտանցում նորարարական տեխնոլոգիաները եւ ապրանքներն անդամ պետությունների տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում ներդնելու նկատմամբ,

անցկացնում են դիտանցում անդամ պետությունների համատեղ գիտատեխնիկական գործունեության եւ նորարարական համագործակցության արդյունքների նկատմամբ,

հրապարակում են ակնարկներ եւ զեկույցներ՝ գիտատեխնիկական զարգացման առաջատար ազգային եւ համաշխարհային ձեռքբերումների եւ անդամ պետությունների տնտեսության իրական հատվածի նորարարական զարգացման մասին:

IV. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման կարգը

7. Եվրասիական տեխնոլոգիական հարթակները ձեւավորվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշումների հիման վրա:

8. Եվրասիական տեխնոլոգիական հարթակի ստեղծման մասին որոշումն ընդունելիս անդամ պետության մասնակիցը (մասնակիցները) համաձայնեցվում է (են) անդամ պետության լիազորված մարմնի կողմից:

9. Հանձնաժողովն ընդունում է եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման մասին որոշում՝ փաստաթղթերի հետեւյալ փաթեթի հիման վրա՝

ա) մասնակիցների կողմից Հանձնաժողով ներկայացվող՝ եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման մասին դիմում.

բ) մասնակիցների կողմից կազմված հիմնադիր փաստաթղթի նախագիծ, եթե եվրասիական տեխնոլոգիական հարթակը ստեղծվում է իրավաբանական անձի կազմավորմամբ.

գ) մասնակիցների միջեւ պայմանագրի նախագիծ, եթե եվրասիական տեխնոլոգիական հարթակը ստեղծվում է առանց իրավաբանական անձի կազմավորման.

դ) եվրասիական տեխնոլոգիական հարթակների մասնակիցների ցանկի նախագիծ.

ե) եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման նպատակահարմարության հիմնավորում՝ նշելով գործունեության նպատակները եւ խնդիրները, հիմնական ուղղությունները, դրանց համապատասխանությունը Միության արդյունաբերական համագործակցության գերակայություններին.

զ) համատեղ նախագծերի ցանկի նախագիծ:

10. Եվրասիական տեխնոլոգիական հարթակը կարող է ստեղծվել իրավաբանական անձի կազմավորմամբ կամ առանց կազմավորման՝ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված կարգով:

11. Անդամ պետության լիազորված մարմինը կարող է սահմանել եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման վերաբերյալ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման համար պատասխանատուին՝ իր պետության օրենսդրությանը համապատասխան:

12. Եվրասիական տեխնոլոգիական հարթակները, իրենց գործունեության պրոֆիլին համապատասխան, կարող են որպես մասնակից ընդգրկել խոշոր (ճյուղային արդյունաբերական ձեռնարկություններ, պետական ընկերություններ եւ այլն), փոքր եւ միջին բիզնեսի կազմակերպություններ, գիտական կազմակերպություններ (գիտահետազոտական ինստիտուտներ, համալսարաններ

եւ այլն), զարգացման պետական ինստիտուտներ, հասարակական (ճյուղային ասոցիացիաներ եւ միավորումներ) եւ այլ կազմակերպություններ, այդ թվում՝ Միության անդամ չհանդիսացող պետություններից, ինչպես նաեւ ֆիզիկական անձանց:

13. Եվրասիական տեխնոլոգիական հարթակները միավորում են մասնակիցներ առնվազն 3 անդամ պետությունից:

14. Եթե եվրասիական տեխնոլոգիական հարթակները ստեղծվել են իրավաբանական անձի կազմավորմամբ, ապա եվրասիական տեխնոլոգիական հարթակների մասնակիցների կողմից որոշումներն ընդունվում են՝ Եվրասիական տեխնոլոգիական հարթակների հիմնադիր փաստաթղթերին համապատասխան:

15. Եթե եվրասիական տեխնոլոգիական հարթակները ստեղծվել են առանց իրավաբանական անձի կազմավորման, ապա եվրասիական տեխնոլոգիական հարթակների մասնակիցների կողմից որոշումներն ընդունվում են՝ դրանց միջեւ պայմանագրին համապատասխան:

16. Եթե եվրասիական տեխնոլոգիական հարթակները ստեղծվել են իրավաբանական անձի կազմավորմամբ, ապա եվրասիական տեխնոլոգիական հարթակներին մասնակիցների միացումն իրականացվում է՝ եվրասիական տեխնոլոգիական հարթակների հիմնադիր փաստաթղթերին համապատասխան:

17. Եթե եվրասիական տեխնոլոգիական հարթակները ստեղծվել են առանց իրավաբանական անձի կազմավորման, ապա եվրասիական տեխնոլոգիական հարթակներին մասնակիցների միացումն իրականացվում է՝ դրանց մասնակիցների միջեւ պայմանագրին համապատասխան:

18. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործունեության կազմակերպական եւ տեղեկատվական ապահովումն իրականացվում է դրանց մարմինների եւ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից, ինչպես նաեւ այդ նպատակներով կարող են սահմանվել մասնակիցներ յուրաքանչյուր անդամ պետությունից՝ համապատասխան անդամ պետության լիազորված մարմնի հետ համաձայնեցմամբ:

19. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ղեկավարումն ապահովելու նպատակով ձեւավորվում է ղեկավար մարմին, որի մեջ մտնում են նաեւ բոլոր այն անդամ պետությունների ներկայացուցիչները, որոնց կազմակերպությունները եվրասիական տեխնոլոգիական հարթակների մասնակիցներ են:

20. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործառումն ապահովելու նպատակով հարկ եղած դեպքում ձեւավորվում են եվրասիական տեխնոլոգիական հարթակների մարմիններ՝

փորձագիտական, համակարգման, գիտատեխնիկական խորհուրդներ, աշխատանքային խմբեր, մրցութային եւ այլ հանձնաժողովներ:

Նշված մարմինների գործունեության հետ կապված ծախսերն իրականացվում են շահագրգիռ կազմակերպությունների եւ եվրասիական տեխնոլոգիական հարթակների մասնակիցների կողմից:

V. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ֆինանսավորման կարգը

21. Համատեղ գիտահետազոտական եւ փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքների, միջոցառումների, համատեղ նախագծերի իրագործման համար եվրասիական տեխնոլոգիական հարթակներն ապահովում են ֆինանսավորման ներգրավում՝

ա) եվրասիական տեխնոլոգիական հարթակների մասնակիցների սեփական միջոցներից.

բ) ներդրողների, ֆոնդերի, հասարակական եւ այլ շահագրգիռ կազմակերպությունների միջոցներից.

գ) լիազորված մասնագիտացված ազգային կազմակերպությունների միջոցներից՝ համատեղ միջոցառումների, համատեղ նախագծերի ազգային մասերի լրիվ կամ մասնակի ֆինանսավորման նպատակով՝ վերջիններիս ներքին ֆինանսական քաղաքականությանը համապատասխան.

դ) անդամ պետությունների բյուջեներից՝ համատեղ գիտահետազոտական եւ փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքների, միջոցառումների, համատեղ նախագծերի ազգային մասերի լրիվ կամ մասնակի ֆինանսավորման նպատակով՝ համապատասխան պետական ծրագրերի, պետական աջակցության գործիքների շրջանակներում այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

ե) միջազգային ֆինանսական կազմակերպությունների միջոցներից՝ վերջիններիս ներքին ֆինանսական քաղաքականությանը համապատասխան, համատեղ նախագծերի լրիվ կամ մասնակի ֆինանսավորման նպատակով.

զ) Միության բյուջեի միջոցներից՝ Հանձնաժողովի կարիքների համար անցկացվող գիտահետազոտական աշխատանքների լրիվ կամ մասնակի ֆինանսավորման նպատակով, Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության եւ Միության ինտեգրացված տեղեկատվական համակարգի շրջանակներում տեղեկատվական համակարգերի ստեղծմանը եւ տվյալների շտեմարանների ձեւավորմանն ուղղված միջոցառումների իրագործման նպատակներով:

22. Համատեղ նախագծերի կազմում իրագործվող միջոցառումների ցանկում կարող են ներառվել՝

ա) Հանձնաժողովի եւ պետական մարմինների կողմից իրենց վրա դրված լիազորությունների շրջանակներում իրագործվող՝ զարգացմանն ուղղված ռազմավարությունների, ծրագրերի եւ այլ փաստաթղթերի մշակման մասով միջոցառումները.

բ) Միության ինտեգրացված տեղեկատվական համակարգի շրջանակներում տեղեկատվական համակարգերի ստեղծման եւ տվյալների բազաների ձեւավորման մասով միջոցառումները եւ Հանձնաժողովի կարիքների համար անցկացվող գիտահետազոտական աշխատանքները՝ Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության իրագործման նպատակներով:

23. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների մասնակիցները պատասխանատու են իրենց պարտավորությունների կատարման համար՝ համապատասխան անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

VI. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործունեությունը համակարգելու կարգը

24. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման եւ գործառման հարցերով՝ անդամ պետությունների փոխգործակցության ընդհանուր համակարգումն իրականացնում է Հանձնաժողովը:

25. Հանձնաժողովն անդամ պետությունների լիազորված մարմինների հետ համատեղ իրականացնում է՝

ա) եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործունեության զարգացման եւ առաջխաղացման նպատակներով «կլոր սեղանների», խորհրդակցությունների եւ տեսահամաժողովների կազմակերպում՝ անդամ պետությունների պրոֆիլային կազմակերպությունների միջավայրում.

բ) եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման եւ գործառման ապահովման լավագույն փորձի կուտակում.

գ) սույն Հիմնադրույթով նախատեսված եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման վերաբերյալ փաստաթղթերի փաթեթների ուսումնասիրում.

դ) սույն Հիմնադրույթի 5-րդ կետի «է» ենթակետում նշված դիտանցման արդյունքներով եւ կատարված աշխատանքի արդյունքների վերաբերյալ եվրասիական տեխնոլոգիական հարթակների համապատասխան փաստաթղթերի հիման վրա եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործունեության արդյունքների վերաբերյալ տարեկան զեկույցի պատրաստում՝ անդամ պետությունների կողմից եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործառման արդյունավետության բարձրացմանը եւ գործունեության խթանմանն ուղղված որոշումների կայացման համար.

ե) եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործառման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկների մշակում եւ դրանք Եվրասիական միջկառավարական խորհրդի քննարկմանը ներկայացնելը:

26. Անդամ պետությունների լիազորված մարմիններն իրականացնում են՝

ա) եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման վերաբերյալ փաստաթղթերի փաթեթների ուսումնասիրում.

բ) եվրասիական տեխնոլոգիական հարթակներին միանալուն եւ դրանց մասնակցելուն ուղղված՝ անդամ պետությունների աշխատանքի համակարգում.

գ) եվրասիական տեխնոլոգիական հարթակների ստեղծման մասին որոշում կայացնելու փուլում եվրասիական տեխնոլոգիական հարթակների մասնակիցների, ինչպես նաեւ եվրասիական տեխնոլոգիական հարթակների կազմակերպական եւ տեղեկատվական գործունեությունն ապահովող՝ անդամ պետությունների մասնակիցների համաձայնեցում.

դ) մասնակցություն եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործունեության դիտանցմանը, այդ թվում՝ համատեղ նախագծերի իրագործում.

ե) մասնակցություն եվրասիական տեխնոլոգիական հարթակների գործառման արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ առաջարկների մշակմանը:

27. Սույն հիմնադրույթի 5-րդ կետի «է» ենթակետով նախատեսված դիտանցում անցկացնելու նպատակներով եվրասիական տեխնոլոգիական հարթակների մարմինների կողմից յուրաքանչյուր տարի մինչեւ հունիսի 1-ն իրականացվում է հետեւյալ փաստաթղթերի պատրաստում՝

ա) մասնակիցների ցանկ՝ հաշվետու տարվա ավարտի դրությամբ.

բ) հաջորդ տարվա գործողությունների պլան.

վ) համատեղ նախագծերի իրագործման վերաբերյալ հաշվետվություն.

գ) հաջորդ տարվա համատեղ նախագծերի թարմացված ցանկ:

28. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորմանը եւ զարգացման խթանմանն ուղղված աշխատանքները համակարգելու նպատակով Հանձնաժողովն անդամ պետությունների լիազորված մարմինների հետ համատեղ կազմակերպում է մշտապես գործող հարթակ, որի շրջանակներում կազմակերպվում են եվրասիական տեխնոլոգիական հարթակների հնարավոր մասնակիցների հանդիպումներ, եվրասիական տեխնոլոգիական հարթակների մասնակիցների կողմից անցկացվում է զարգացման արդիական ուղղությունների եւ զարգացման խոչընդոտների վերացման խնդիրների քննարկում, մշակվում են եվրասիական տեխնոլոգիական հարթակների խթանման վերաբերյալ առաջարկներ:

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական միջկառավարական
խորհրդի 2016 թվականի ապրիլի 13-ի
թիվ 2 որոշման

ՑԱՆԿ

եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման ուղղությունների

1. Բժշկական եւ բժշկական կենսատեխնոլոգիաներ, դեղագործություն
2. Տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաներ
3. Ֆոտոնիկա
4. Ավիատիեզերական տեխնոլոգիաներ
5. Միջուկային եւ ռադիացիոն տեխնոլոգիաներ
6. Էներգետիկա
7. Տրանսպորտի տեխնոլոգիաներ
8. Մետալուրգիայի տեխնոլոգիաներ եւ նոր նյութեր
9. Բնական ռեսուրսների արդյունահանում եւ նավթի ու գազի վերամշակում
10. Քիմիա եւ նավթաքիմիա
11. Էլեկտրոնիկա եւ մեքենաշինական տեխնոլոգիաներ
12. Էկոլոգիական զարգացում
13. Արդյունաբերական տեխնոլոգիաներ
14. Գյուղատնտեսություն, սննդարդյունաբերություն, կենսատեխնոլոգիաներ